# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԵՐՄԱՆ ԳՐԷՖ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Յարգարժան պրն. Գերման Գրէֆ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ ռուս ժողովրդի արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:

Մեր ժողովուրդը ճանաչում է Ձեզ ՌԴ պետական կեանքում ստանձնած Ձեր կարեւոր յանձնառութիւններով: Դուք տարիներ շարունակ պատասխանատու պաշտօններում կարեւոր ջանքեր ներդրեցիք բարեկամ երկրի՝ Ռուսաստանի Դաշնութեան զօրացմանն ու առաջընթացին, որտեղ իրենց ազատ կեանքն են կառուցում նաեւ մեր ժողովրդի զաւակները:

Այսօր ուրախ ենք Մեր բարձր գնահատանքը բերելու Ձեզ՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը բերած Ձեր մեծ աջակցութեան համար: Ձեր բարեգործութիւնը բարի վկայութիւն է Ձեր հաւատի ու աստուածսիրութեան, նաեւ մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ ազնիւ ու ջերմ վերաբերմունքի: Այսօր առ Աստուած փառաբանական աղօթքն է համայն հայութեան շուրթերին, որ ՌԴ մայրաքաղաքում իր օրհնաբաշխ դռներն է բացում շքեղակառոյց եկեղեցին՝ տարածելու քրիստոնէական լոյսը եւ հոգեւոր սնունդ մատուցելու բարեպաշտ հաւատացեալներին: Հաւատաւոր Մեր զաւակները մշտապէս երախտագիտութեամբ են յիշելու Ձեզ եւ աղօթքներ ու բարեմաղթանքներ ուղղելու առ Տէրը Երկնաւոր Ձեր եւ Ձեր ընտանեաց համար:

Ի գնահատութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ազնիւ ծառայութեանց, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ նորանոր յաջողութիւններ պարգեւի Ձեզ՝ ի շինութիւն Ռուսիոյ օրհնեալ Երկրի եւ ի բարօրութիւն աստուածասէր ռուս ժողովրդի:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 770